ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2018 թվականի օգոստոսի 21-ից 23-ը Ռուսաստանի Դաշնություն /Մոսկվա/
գործուղման արդյունքների մասին

1. **Անունը, ազգանունը**
   Արման Ուդումյան

2. **Զբաղեցրած պաշտոնը**
   ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի տեղակալ

3. **Գործուղման վայրը և ժամկետները**
   Մոսկվա, Ռուսաստանի Դաշնություն, օգոստոսի 21-ից 23-ը 2018 թ.

4. **Հրավիրող կողմը**
   Աշխատանքի միջազգային կազմակերպության (ԱՄԿ) Արևելյան Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի գրասենյակ, նստավայրը Մոսկվա

5. **Գործուղման նպատակը**

   ա) մասնակցություն «Խթանելու մրցունակությունը և արտադրողականությունը աշխատանքային օրենսդրության կարգավորման և համապատասխանության միջոցով» եռօրյա կոնֆերանսին,
   բ) քննարկելու ԱՄԿ «Արժանապատիվ աշխատանք» 2018-2022թթ. ազգային ծրագրում ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից առաջ քաշված փոփոխությունները,
   գ) հանդիպելու ԱՄԿ Արևելյան Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի գրասենյակի տնօրենի հետ՝ քննարկելու կողմերի միջև համագործակցության և ծրագրային առաջնահերթությունները:

6. **Քննարկված թեմաները**
   ա) աշխատանքի միջազգային ստանդարտները և մրցունակությունը,
   բ) աշխատանքային օրենսդրությունը որպես արտադրողունակության և մրցունակության խթան,
   գ) մասնագիտական անվտանգությունը և առողջությունը որպես արտադրողունակության խթան,

դ) արտադրողունակության և մրցունակության խթանումը աշխատանքի տեսչության արդյունավետ համակարգի կիրարկմամբ:

7. **Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը**

Հանդիպումներ.

- Օլգա Կուլաևա - ԱՄԿ Արևելյան Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի գրասենյակի տնօրեն,
- Դրագան Ռադիչ – ԱՄԿ Ժնևի գլխավոր գրասենյակի ՓՄՁ թիմի ղեկավար,
- Վալենտին Մոկանու – ԱՄԿ Մոսկվայի գրասենյակի աշխատանքի տեսչության և Մասնագիտական անվտանգության և առողջության ավագ մասնագետ:

Ելույթ.

- Կոնֆերանսի եզրափակիչ մասում՝ ներկայացնելով ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության դիրքորոշումն աշխատանքի տեսչության արդյունավետ համակարգ ունենալու և այդ մասով իրականացվող ընթացիկ աշխատանքների մասին:

8. **Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը**

Կոնֆերանսի ընթացքում ԱՄԿ Արևելյան Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի գրասենյակի հետ ձեռք բերվեց պայմանավորվածություն՝ վերանայելու «Արժանապատիվ աշխատանք» 2018-2022թթ. ազգային ծրագրում ներառելու որոշ աշխատանքներ՝ ինչպիսիք են վերանայելու սոցիալական գործընկերության եռակողմ համաձայնագիրը, մշակելու հանրային հատվածի ծառայողների կատարողականի գնահատման ցուցանիշներ, ուսումնասիրելու ներդրումների արդյունքում ստեղծվող աշխատատեղերի դինամիկան և միտումները:

9. **Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները**

Վերոնշյալ պայմանավորվածությունների արդյունքում ԱՄԿ գրասենյակը մինչև ս/թ նոյեմբեր ամիսը կաջակցի ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությանը և սոցիալական գործընկերության մյուս կողմերին՝ գործատուների միությանն ու արհմիություններին, եռակողմ համաձայնագրի նոր տեքստի մշակման հարցերում: Մեկ այլ առաջարկության համաձայն, ԱՄԿ-ն կաջակցի ՀՀ ԱՍՀՆ-ին՝ ուսումնասիրելու աշխատանքային օրենսդրությունը և

ներկայացնելու առաջարկներ, որպեսզի այն ավելի նպաստավոր դառնա մրցունակության և արտադրողունակության տեսանկյունից:

10. **Գործուղվողը**
Արման Ուդումյան

11. **Ստորագրությունը, ամսաթիվը**

28.08.2018թ.